# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՕՇԱԿԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ 1834 ԹՎԱԿԱՆԻՆ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

1827 թվականի օգոստոսի 15-ին Աբբաս Միրզա պարսից արքայորդին 30 հազար զորքով, Սարդարապատի ուղղությամբ Արաքս գետը անցնելով, հարձակվում է Էջմիածնի վրա՝ հայոց հավատքի սրբություն սրբոց ս. Էջմիածինը հիմնահատակ կործանելու վճռականությամբ:

Ռուսական մի գումարտակ միայն թողնվել էր Էջմիածնի պաշտպանության համար: Գումարտակի 700 զինվորներ ծանր վիրավորներ էին:

Այդ օրհասական պահին Մայր Աթոռում էր գտնվում նաև Ներսես Աշտարակեցին, որը դիմում է Ապարանի լանջերին իր զորաբանակի հետ փոքր ժամանակով հանգստացող իր բարեկամ գեներալ Կրասովսկուն՝ օգնության հասնել:

Գեներալ Կրասովսկին երեք հազար հայ և ռուս մարտիկներով և տասը թնդանոթներով օգնության է հասնում Մայր Աթոռին:

Օգոստոսի 17-ին Օշական գյուղին մոտ տեղի է ունենում վճռական ճակատամարտը, և Կրասովսկին իր երեք հազար զորքով ջախջախիչ հարված է հասցնում պարսկական 30 հազարանոց բանակին և Աբբաս Միրզային քշում դեպի Արաքսի աջ ափը:

Փրկվում է Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Օշականի ճակատամարտում հայ և ռուս գնդերի կորուստը լինում է 1131 հոգի, իսկ պարսիկների կորուստը շատ ավելի մեծ էր:

1834 թվականին Էջմիածնից 4 կմ հեռավորության վրա, Օշականի ճանապարհին, Աշտարակեցու ջանքերով և Մայր Աթոռի միջոցներով կանգնեցվում է մի կոթող, որը մինչև այսօր կանգուն է՝ որպես հայ ժողովրդի և Մայր Աթոռի երախտագիտության արտահայտություն, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության խորհրդանշան:

Օշականի ճակատամարտին նվիրված Էջմիածնի հուշարձան-կոթողը
(1834 թ.)

**Հոկտեմբերի 8-ին, ժամը 17-ին,** ահա այս պատմական հուշարձանի առաջ Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվում է հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն՝ ի ներկայության ռուսաց Տ. Պիմեն և Կ. Պոլսի հայոց տ. Ծնորհք սրբազան պատրիարքների, վրաց եկեղեցու պատվիրա-

կության, հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորների և հոծ հայ բազմության:

Հուշարձանին ծաղկեպսակներ են դնում Հայոց Հայրապետը, ռուսաց Սրբազան Պատրիարքը և վրացական պատգամավորությունը:

Ապա խրոխտ և հաղթական հնչում է Երևանի պետական փողային նվագախմբի կատարմամբ «Էջ Միածինն ի Հօրէ» Մայր Աթոռի հոգևոր հիմնը, որից հետո Հայոց Հայրապետը ոգեկոչում է հայրենասիրական փառքով Օշականի ճակատամարտում զոհվածների անմոռաց հիշատակը (Հայոց Հայրապետի ճառը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 10):

Այնուհետև կատարվում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն, մինչ նվագախումբը հնչեցնում է «Քրիստոս յարեաւ» շարականը:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ, ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՇԻՐՄԻ ՎՐԱ

1826—1827 թվականներին, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, հայրենասիրական մեծ գործունեություն ծավալեց վրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին, որը պատմությանն անցավ որպես Ներսես Ե Աշտարակեցի «Պաշտպան հայրենեաց» տիտղոսով (Տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում դոկտ. Պիոն Հակոբյանի և Ա. Հատիտյանի ուսումնասիրությունները Աշտարակեցու հայրենասիրական գործունեության մասին, էջ 68—84 և 154—165):

1857 թվականի փետրվարի 13-ին վախճանվում է Ներսես Աշտարակեցին, մեծագործ և հայրենասեր կաթողիկոսը: Նրա աճյունը ամփոփվում է Մայր տաճարի զանգակատան հարավային կողմում: Շիրմի վրա կա հետևյալ տապանագիրը.

«Պաշտպան հայրենեաց
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ներսէս Ե Աշտարակեցի»:

**Հոկտեմբերի 8-ին,** ժամը 18-ին, Հայոց Հայրապետի նախագահությամբ հանդիսավորապես կատարվում է հոգեհանգստյան կարգ Աշտարակեցու շիրմի վրա՝ ի ներկայության դարձյալ Տ. Պիմեն, տ. Շնորհք սրբազան պատրիարքների, վրաց եկեղեցու պատվիրակության, հոգևորական և աշխարհական պատգամավորների և ժողովրդի հոծ բազմության:

## ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

**Հոկտեմբերի 8-ին, երեքշաբթի օրը,** երեկոյան ժամը 18.30-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոբելյանական նիստ՝ նվիրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին:

Հանդիսությանը ներկա էին Տ. Պիմեն, տ. Շնորհք սրբազան պատրիարքները, վրաց եկեղեցու պատվիրակությունը, բարձրաստիճան հայ հոգևորականներ, մայրաքաղաքի մշակութային հաստատությունների ղե-

կավարներ, մտավորականներ, արվեստագետներ և հրավիրյալների հոծ բազմություն՝ ավելի քան 400 հոգի:

Հանդիսությունը բացվում է խմբովին արտասանված Տերունական աղոթքով, որին հաջորդում է ՀՍՍՀ պետական հիմնի կատարումը:

Այնուհետև հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս Մայր Աթոռի միաբան տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Հոգեհանգիստ Ներսես Ե Աշտարակեցու շիրմի վրա (1978 թ. հոկտեմբեր 3)

## Տ. ԱՐՍԵՆ ԵՊՍ. ԲԵՐԲԵՐՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ
(3 հոկտեմբեր 1978 թ.)

Այսօր Հայաստանում ամենուրեք ցնծության ձայներ են հնչում և հայրենի կառավարության լայն միջոցառումներով ու խանդավառությամբ նշվում է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը ևս, իբրև հայ ժողովրդի հոգևոր կենտրոն, իր Հայրապետի գլխավորությամբ, շուքով և հանդիսավորությամբ, Վեհարանի այս դահլիճում, ի ներկայության հոգևոր առաջնորդների, աշխարհական պատգամավորների, հայրենի մտավորականության և հավատացյալների, նշում է պատմական այդ մեծ իրադարձությունը:

Ուրախ ենք, որ այս առթիվ ներկա են այս հանդիսությանը Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը, իբրև հայ ժողովրդի անկեղծ բարեկամը՝ իր հետ ունենալով իր շքախմբի անդամները, ինչպես նաև վրաց ուղղափառ եկեղեցվո ներկայացուցիչները՝ հանուն Նորին Սրբություն վրաց Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի:

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման պատմական շրջադարձային նշանակության մասին պիտի անդրադառնա հարգարժան պրոֆեսոր Պիոն Հակոբյանը:

Սակայն չենք կարող չանդրադառնալ մի պահ այս ուղղությամբ Մայր Աթոռ ս. Էջմիածնի մեջ ապրած և գործած մեր մեծ Հայրապետների հայրենասիրական գործունեությանը, ինչպիսիք են՝ Հակոբ Ջուղայեցի, Հակոբ Ծամախեցի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսները, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցը և մանավանդ հայրենյաց պաշտպան մեծագործ Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսը, որի անունն ու խնկելի հիշատակը ընդմիշտ արձանագրված է 1826—27 թվականների տարեգրությանց մեջ:

Հայ եկեղեցականության հայրենասիրական այդ ուղղությունը շարունակվեց նրանց հաջորդող հետագա սերունդների կողմից ևս 1918-ի Սարդարապատի հերոսամարտում և շարունակվում է մինչև այսօր: Մեր լուսահոգի նախնիների գծած ուղիով շարունակում ենք հանդես գալ նաև այսօրվաններս՝ իբրև մեր հայրենիքի հայրենասեր քաղաքացիները, այն գիտակցությամբ, որ, արդարև, սովետական այլ ժողովուրդների հետ մեր խաղաղասիրական համագործակցությամբ միայն կարող են պսակվել հայ ժողովրդի ազգային և եկեղեցական բոլոր ակնկալությունները:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, Ձեր օրհնությամբ բացված հայտարարել Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին նվիրված այսօրվա հանդիսավոր երեկոն:

Օրվա հանդիսության գլխավոր բանախոսն էր բանասիրական գիտությունների դոկտոր Պիոն Հակոբյանը, որի բովանդակալից ու շահեկան զեկուցումը նվիրված էր Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին:

## ԴՈԿՏՈՐ ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

### Էջմիածինը և Արևելյան Հայաստանի ազատագրումը

Վեհափառ Հայրապետ,
Սրբազան հայրեր,
Հարգարժան հյուրեր և հանդիսականներ.

Այսօր հավաքվել ենք ամենայն հայոց նվիրական սրբավայրում, այս կամարների տակ՝ մտովի վերհիշելու վերջին դարերի մեր պատմության անցուդարձերը և ոգեկոչելու հոգիները այն մեծ հայորդիների ու գաղափարի զոհերի, որոնք անվերջանալի բռնություններից ու հարստահարություններից, կոտորածներից ու տեղահանումներից փրկելով հայության բեկորները՝

ի վերջո համախմբեցին նրանց Այրարատյան աշխարհում, ռուսաց հզոր տերության հովանու տակ և բաց արին նրանց առջև տնտեսական ու հոգևոր զարգացման մի վերընթաց ճանապարհ:

Հայ ժողովրդի եկեղեցական ու քաղաքական մաքառումների, նրա լեզվի ու մատենագրության անցած դարավոր ճանապարհի վերջին հարյուրամյակների պատմությունը՝ 16—19-րդ դդ. ժամանակահատվածում, իրավամբ համախմբվում է **«Էջմիածնական շրջան»** խորագրի տակ: Ժողովրդի տնտեսական ու հոգևոր կյանքի ներքին ծալքերը թափանցելու ազգային և եկեղեցական պատմության ճշգրիտ պարբերացման ծնունդ է այս բնորոշումը, միանգամայն լուրջ ու կշռադատված մի եզրահանգում, որն ունի մեծ խորհուրդ ու խորքեր, և որի հեղինակը հռչակավոր հայագետ Նիկողայոս Ադոնցն է:

Տևական թափառումներից հետո Հայրապետական Աթոռն ու Լուսավորչի Աջը վերջնականապես Այրարատյան աշխարհի գլխավոր սրբավայրում հաստատվելու օրերից Էջմիածինն իր համեստ, գիտնականությամբ բնավ չհոխորտացող, սակայն խստակենցաղ ու շրջահայաց վանականներով և ազգանվեր գործունեությամբ, հիրավի, աստիճանաբար դառնում էր այն կենտրոնաձիգ ուժը և հոգևոր ու քաղաքական կենտրոնը, որի շուրջ էին համախմբվում ազգի որբացած, աշխարհով մեկ սփռված զավակները, որի հետ կապում մահմեդական բռնապետների դարավոր ու դաժան լծից փրկվելու անմարելի հույսը: Ազգի վեհապետները միաժամանակ ստանձնում էին ազգի քաղաքական առաջնորդի պարտականությունները, թեպետ վերստին նրանց գլխավոր զենքերը հույսի ու հավատի, սիրո և եղբայրության քարոզն ու հորդորներն էին:

Թե ի՞նչ է եղել հայ ժողովրդի կյանքն ու պայքարն այնուհետև՝ հայտնի է բոլորին: Դրանք մռայլ ու խավար ժամանակներ էին, երբ պարսիկներն ու թուրքերը, կատաղած գազանների պես հարձակվելով մեր հինավուրց հայրենիքի վրա և ծվատելով այն, ավերում ու ամայացնում էին երկիրը, կոտորում ու գերեվարում նրա զավակներին, քանդում ու ոչնչացնում դարերով ստեղծված մշակութային արժեքները: Եվ այս պայմաններում մի՞թե «կարող էր վարդը ծովի միջում զորանալ, մանիշակը՝ կրակի առաջին դիմանալ. կարո՞ղ էր կակուղ ցորենի հասկը էն կայծակին ու կարկտին համբերիլ...»,—տարակուսած հարցնում էր հայոց պատմական բախտի մեծ շրջադարձի տարեգիրը՝ Խաչատուր Աբովյանը (հ. III, 55, 56):

16—17-րդ դարերում, Ստեփաննոս Սալմաստեցու (1545—1564), Միքայել Սեբաստացու (1564—1576) և Հակոբ Ջուղայեցու (1655—1680) գահակալության տարիներին մասնավորապես, առաջին գործնական քայլերն են արվում Արևմուտքի քրիստոնյա տերությունների օգնությամբ պարսիկ ու թուրք բռնապետությունների լծից Հայաստանն ազատագրելու և վերամիավորելու ուղղությամբ: Ճիշտ է, Հակոբ Ջուղայեցու, նրա նախորդների ու հետևորդների որոնումները հայությանը չհասցրին բաղձալի եզերք՝ ազգն ու իր Վեհափառ Հայրապետները մեկ անգամ չէ, որ ականատես եղան Արևմուտքի հետ կապված հույսերի խորտակմանը, բայց և չկորցրին ազատագրության հույսը:

Ջուղայեցու ազատատենչ ու բորբոքուն հոգին զորավիգ դարձավ նրա հոգևոր զավակներից մեկին՝ Իսրայել Օրուն (1659—1711), մինչ վերջինս, ավելի քան քսանամյա ապարդյուն թափառումներից հետո, Հավիտենական քաղաքում և Հռենոսի ափերին, ի վերջո, հայտնագործեց հայոց փրկության

ճանապարհը, որ և հասցրեց նրան Հյուսիսի հզոր տիրակալի մայրաքաղաք:

Պետրոս Մեծն ու իր հաջորդները, հատկապես Եկատերինա 2-րդ կայսրուհին, գործնական քայլեր արին Հայոց թագավորությունը վերականգնելու ուղղությամբ. սկսեցին կազմվել հետաքրքրական ծրագրեր, մշակվել ապագա վերածնված Հայաստանի և Ռուսական տերության միջև կնքվելիք բարեկամության և եղբայրության դաշնագրության հիմունքները, որոշվել դեպի բիբլիական Այրարատյան աշխարհ ձեռնարկվելիք հաղթարշավների անցուդիները, ուշագրավ նախագծումներ, որոնց իրենց մասնակցությունն են բերել հռչակավոր զորավարներ Գ. Պոտյոմկինը և Ա. Սուվորովը, իսկ այս վերջինը, ինչպես հայտնի է, մայրական գծով սերում էր հայ ընտանիքից:

Հայոց քաղաքական ու եկեղեցական պատմության մեջ սկսված այդ խորհրդանշական պահը կապվում է երեք նշանավոր և պատկառելի հոգևորականների՝ Սիմեոն Երևանցու (1710/14—1780), Ղուկաս Կարնեցու (վախճ. 1799) և Հովսեփ Երկայնաբազուկ-Արղությանցի (1743—1801) սրբացած անունների հետ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին (1763—1780)՝ ազգի ու եկեղեցու շահերին նվիրված այդ պատկառելի գործիչը, իմաստասերն ու բանաստեղծը, վիթխարի դեր է խաղացել ո՛չ միայն հայ կյանքը տգիտության նինջից արթնացնելու, այլև պարսիկ ու թուրք բռնակալների լծից Հայաստանի ազատագրման բաղձալի պահն արագացնելու գործում: Հանրահայտ են նրա ազգաշեն մեծ գործերը: Սիմեոն Երևանցու եռանդուն ջանքերի շնորհիվ Էջմիածինը հասցվեց այնպիսի վիճակի, որ նախանձելի դարձավ շատերին: Էջմիածնում, այն խավար ժամանակներում, հիմնվեց տպարան, կանոնավորվեց դպրոցական ուսումը, կարգավորվեցին վանական իրավունքներն ու տնտեսական դրությունը և այլն: Սիմեոն Երևանցու օրերում օտար տիրողներն այլևս հեշտ ու հանգիստ չէին կարողանում միջամտել հայ հոգևորականության և Էջմիածնի ներքին գործերին: Նա հավանություն տվեց Ռուսաստանի օժանդակությամբ օտար լծից Հայաստանն ազատելու և հայկական անկախ պետականությունը վերականգնելու գաղափարին. այդ նպատակով նա գաղտնի բանակցություններ սկսեց ռուսական արքունիքի ու հոգևոր գործիչների հետ: Մեզ են հասել Սիմեոն Երևանցու մի քանի նամակները՝ ուղղված Եկատերինա կայսրուհուն, որոնք հետատես Հայրապետի ազատաբաղձության, հետևողականության և զգայուն սրտի հայելին են:

Սիմեոն Երևանցուն ընդունված է կոչել հայոց պատմության ամենահետևողական «հակահեղափոխականը» միմիայն այն պատճառով, որ նա բացորոշ հավանություն չէր տալիս Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի ու նմանների գործելակերպին: Հրապարակայնորեն ազդարարված ազատագրական գաղափարներն ու բացարձակ բանակցությունները նա վտանգավոր էր համարում ազգի հանար, ուստի, խրախուսելու փոխարեն, հետապնդում էր նման մարդկանց, ներքուստ, սակայն, երբեք չհրաժարվելով ազատագրության գաղափարից և մինչև վերջ էլ ուղիներ որոնելով այն իրականություն դարձնելու համար: Դեպի Ռուսիա Դավիթ վարդապետի (1766) և ապա Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցի (1773) առաքելությունների բուն շարժառիթը հենց այդ էր: Այս հանդիսությունների օրերին մենք մեր հիշողությունների մեջ վերականգնում ենք այդ խոհուն, հետևո-

ղական և առաջիմաց մարդու պայծառ կերպարը, որը ճիշտ կանխատեսեց հայոց ազատագրական շարժման ուղին և դրեց նրա կարևոր հիմնաքարերից մի քանիսը:

Սիմեոն Երևանցին ինքնատիպ ու մեծ էր նաև իբրև եկեղեցական ներքին կյանքի վերափոխիչ: Նա բարեկարգություններ է կատարում հայոց եկեղեցական արարողության ու տոնացույցի մեջ և հատուկ օր սահմանում ռուս կայսեր տոնի համար, գրում պատշաճ հրահանգ ու մաղթանք: 1780 թ. մայիսի 5-ին պաշտոնապես Եկատերինա կայսրուհուն է մատուցվում Սիմեոնի Տոնախմբության տետրակի հայերեն բնագիրը՝ կից ռուսերեն թարգմանությամբ: Սիմեոնը, բացի այդ, հորինում է մի սքանչելի «Շարական» ռուսական կայսերական տան հզորության ու հարատևության առթիվ, որն, ի դեպ, քաղաքական ներբողի առաջին օրինակն է հայոց նոր քնարերգության պատմության մեջ:

«Ամենազոր Աստուած և թագաւոր յաւիտենից, որ ի պատկեր քո երկնաւոր և աներևոյթ թագաւորութեանդ հաստատեցեր յերկրի թագաւոր զԵկատարինէ կայսերուհի՝ ի կառավարել և ի պահպանել զքո ժողովուրդ. պահեա՛ զսա անսասան և անպարտելի:

Աղբիւր կենաց և պարգևիչ խաղաղութեան և զօրացուցիչ քոյոց ծառայից. յաւե՛լ զկեանս խաղաղականս ի քէն պսակեցեալ արքայիս մերոյ Եկատարինէ կայսերուհւոյ և զօրացո՛ ի թշնամեաց պատերազմի ի փառս անուանդ և ի պայծառութիւն եկեղեցւոյ քում սրբոյ. յորում փառաւորի անդադար տէրութիւնդ քո:

Բարձրացո՛, Տէր, և փայլեցո՛ զգաւազան իշխանութեան սորա ընդ ամենայն ծագս երկրի. ընդարձակեա՛ շառաւիղօք և հարազատ ժառանգակցօք մինչև ի կատարած աշխարհի, այլև օրհնեա՛ և պահպանեա՛ զամենեսեան, որք ընդ իշխանութեամբ սորին ենթադրին. յորոց փառաւորի անդադար տէրութիւնդ քո:

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշա՛րժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան» (Սիմէօն Երևանցի, Գիրք աղօթից..., Նոր Նախիջևան, 1794, էջ 5):

Սիմեոն Երևանցին, ի վերջո, կենդանի ողջակեզը դարձավ իր հոտի փրկության սուրբ գործի: Զանալով մեղմել Հերակլ 2-րդի ցասումը և փրկել դեպի Վրաստան տարագրվող բազմահազար հայությանը, գերմարդկային ճիգերով հավաքելով վերջին ուժերը՝ մահվան անկողնուց նա ճանապարհ ընկավ դեպի զորակայան և ապստրդյուն բանակցություններից ֆիզիկապես ու հոգեպես փշրված՝ շատ շուտով փակեց աչքերը:

Սիմեոն Երևանցու գործը շարունակեց նրա սիրելի աշակերտն ու հաջորդը՝ Ղուկաս Կարնեցին (1780—1799): Ղուկաս կաթողիկոսի օրերում իրադրությունները բավականաչափ փոխվել էին, և նա թեպետև դարձյալ գաղտնի, բայց ավելի արձակ ու համարձակ էր գործում: Առաջին անգամ ռուս կայսեր դեսպանը 1783 թ. հոկտեմբերին ժամանեց Էջմիածին և գաղտնի տեսակցություն ունեցավ հայոց կաթողիկոսի հետ: Վերջինիս տնտեսական օրագրում գտնում ենք անչափ ուշագրավ և շատերին անծանոթ հիշյալ գրառումը. «Ռուսաց երկրէն եկեալ **Էչի** անուամբ Կրաբ մայոր կոչեցեալ **Ռուսին**, որի անունն էր Փէթրի, մինչ եկն ի սուրբ Աթոռս, նմա ետուք ա կարմիր զարպապ կապայ, որ էր մեր խանի տուածն սրբազան կաթողիկոսին, ա թիրմայ շալ (թո՛ղ զիւր և դրան մարդկանց նաղտն). ի հոկտեմբերի 10» (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան № 2/11, էջ 264):

Ղուկաս Կարնեցին՝ այդ «այրը խորախորհուրդ և զգոյշ» («Դիվան հայոց պատմության», Դ, ԾԷ), մինչև վերջ էլ չդադարեցրեց գրավոր հաղորդակցությունը ռուս պետական ու ռազմական նշանավոր գործիչների հետ: Նրա օրերում ու նրա օրհնությամբ սկսվեցին նաև Այրարատյան աշխարհի հայոց առաջնորդների անմիջական հարաբերությունները ռուս տերության հետ, սկզբներում՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանցի միջնորդությամբ, իսկ հետո, 1784 թ. օգոստոսից՝ կաթողիկոսի հավանությամբ Պետերբուրգ առաքելով հատուկ ներկայացուցիչ, որը ռուսական դիվանագիտական վավերագրերում հիշվում է Այրարատյան դեսպան տիտղոսով: Այդ մարդը Սիմեոն Երևանցու աշակերտներից ու մերձավորներից մեկի՝ Սահակ Գեղամացի արքեպիսկոպոսի եղբայրն էր, կրթված, շրջահայաց ու հայրենասեր մի մարդ՝ Ստեփաննոս Տեր-Սահակյան Գեղամյանցը: Երևանում թողած նրա համախոհներն էին՝ Մելիք Աբրահամ Մելիք Աղամալյանը, Գաբրիել յուզբաշի Գեղամյանը, Սիմեոն կաթողիկոսի եղբայր Մելիքսեթը, Խաչատուր Աբովյանի պապը՝ քանաքեռցի Ապով դի Վիրապը, և էլի հինգ հոգի, բոլորն էլ Ղուկաս Կարնեցուն մոտիկ մարդիկ:

1784 թ. սեպտեմբերի 10-ին ռուսական արքունիքին և ֆելդմարշալ Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինին հասցնելով Երևանի հայոց առաջնորդների աղերսագրերը և բնութագրելով Այրարատյան դեսպանին, Հովսեփ Արղությանցը գրում էր. «...Զարթեան և բնակիչքն Արարատեան, և ցանկան ի ձեռն Ձերոյ պայծառափայլութեան բարի միջնորդութեամբն ազատիլ ի դառն ծառայութենէ նեղչաց իրեանց, զանկեալ թագն կանգնել և վերստին նորոգել զմանկութիւն ազատութեան իրեանց իբրև զարծուի: Ուստի փութացան առաքել առ Ձեզ, ամենախոնարհ աղաչանօք իրեանց, Ստեփանն Սահակեան, այր հանճարեղ և երկայնամիտ և ի բանս խորհրդական, որ մինչև ցայժմ ի բազում բանս պիտոյացեալ է Պաւել Սերգէեւիչին ի տեղւոջէ իւրմէ, վասն որոյ խոնարհաբար խնդրեմ՝ մի՛ ընդունայն համարել զխնդիր նոցա, այլ տալ զօգնութիւն ըստ յուսոյ իրեանց և լինիլ նոցա առիթ փրկութեան և արձանագրել զանձն **Մեծի կայսերութեանն** ի մէջ Արարատայ, ի տեսիլ աշխարհի, թէ՝ սա է փրկիչն ազգին Հայոց, և թողուլ վասն ձեր՝ անուն յաւիտենական» (Աբգար Հովհաննիսյան, Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը XVIII դ. 80-ական թթ., Երևան, 1947, լուսատիպ հավելված. ռուսերեն):

Հայոց բաղձանքների և ռուսների արտաքին քաղաքականության այս օրինակ զուգադիպությունն դժվար էր երևակայել: Ռուսներն, իսկապես, նույն շրջանում ծրագրում էին Անդրկովկասում, Վրաստանի կողքին ստեղծելու նոր Հայաստան ու Աղվանք, կազմել վերջիններիս համար կառավարություններ և բանակցություններ սկսել դրանց ներկայացուցիչների հետ՝ Ռուսաստանի կազմում ներգրավելու համար: Դեռևս միմիայն նախագծերի ու դիվանագիտական վավերաթղթերի մեջ վերածնված այդ Հայաստանը պետք է լիներ շատ ընդարձակածավալ և իր մեջ առներ «բոլոր հին հայկական հողերը», նախապես դրանք ռուսական զենքով և հայերի զինակցությամբ նվաճելով Պարսկաստանից և Թուրքիայից:

Այրարատյան աշխարհը ռուսաց տերության միանալու 150-ամյակի օրը ազգն ու եկեղեցին երախտագիտությամբ են վերհիշում նաև այն մեծ ջանքերը, որ թափել է նրա ավագ սպասավորներից մեկը՝ Հովսեփ Երկայնաբազուկ-Արղությանց արքեպիսկոպոսը, որը հետագայում (1800, հուլիս) ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս, բայց դեռ Էջմիածին չհասած՝ Տլրի-

ղիսում, 1801 թվականի գարնանը, խորհրդավոր հանգամանքներում վախճանվեց:

Հովսեփ Երկայնաբազուկ-Արղությանցը կենդանի կապն էր Էջմիածնի ու ռուսաց տերության միջև, յուրատեսակ հայոց գլխավոր դեսպան ռուսական արքունիքում, աներեր համոզումների տեր մի անձնավորություն, ամբողջությամբ լծված ազգի փրկության և հայոց կործանված թագավորությունը վերականգնելու սուրբ գաղափարին: Նա քանիցս, երես առ երես, բանակցել է Եկատերինա և Պավել կայսրների հետ, հանդիպումներ ունեցել ռուսական զինվորական ղեկավարների հետ, քննարկել դեպի Անդրկովկաս և Հայաստան արշավանք սկսելու ժամկետների ու ճանապարհների հարցը, գծել նրանց հետ ապագա Հայաստանի սահմանները՝ ներառնելով նրանց մեջ, ինչպես ասացինք, նաև թուրքական տիրապետության տակ եղած հողերը: Հովսեփ Արղությանցը հեղինակն է ռուս-հայ զինակցության ու հավիտենական բարեկամության դաշնագրի, ըստ որի՝ ապագա Հայաստանում չպիտի լինեին ճորտեր, բացառվելու էր մարդկանց վաճառքը, երկրի մայրաքաղաք էր հռչակվելու վերաշինված Անին, հայերն ազատորեն, ըստ հնավանդ սովորության, պիտի պահպանեին իրենց հավատքը, չշեղվեին հայ առաքելական եկեղեցու նվիրապետական ու դավանաբանական սկզբունքներից, և այլն:

Դժբախտաբար, Հովսեփ Արղությանցի բազմակողմանի գործունեության, մասնավորապես ռուս արքունիքի հետ նրա վարած քաղաքական բանակցությունների արդյունքներն ամփոփող վավերագրերը ամբողջությամբ դեռ լույս աշխարհ չեն հանված ու հրատարակված ու մասամբ էլ այսօր կորած պիտի համարել: Հասկանալի է ինքյան, որ դժվար ու վտանգավոր գործ էր այն տարիներին անխափան կապ պահպանել Էջմիածնի վեհապետների և ռուսական արքունիքի միջև: Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների հրահանգները պարունակող նամակները և Հովսեփ Արղությանցի պատասխանները, Տփղիսի ճանապարհին, հաճախ, բաց էին արվում անծանոթ հետաքրքրասերների կողմից և ապա, աղավաղելով վերջիններիս բովանդակությունը՝ տարածում այս ու այն կողմ, գրգռում օտար տիրողներին, որոնց հետևանքն էին դառնում նորանոր բռնությունները: Ահա՛ ինչու Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը մի առիթով հրահանգում էր Հովսեփ արքեպիսկոպոսին՝ առանձնահատուկ հոգ տանել, որ նամակները ծածուկ և անկորուստ հասնեն իր ձեռքը, ծանուցել Տփղիսի իրենց մարդկանց, որ վերջիններս չհամարձակվեն այսուհետև քրքրել ծրարները, «չբանալ զպահարանս թղթոց մերոց, յորմէ յառաջանան վնասք արեան չափք, այլ անբաց և զգուշութեամբ և հաւատարիմ մարդովք յղեսցեն առ մեզ, զի կասկածանքն ո՛չ են պակասեալ աստ և ի կողմանքս» («Դիվան Հայոց պատմության», Թ, 251): Դեռ ավելին, Ղուկաս Կարնեցին, հանուն զգուշության, աչքի առաջ ունենալով, որ Երևանի սարդարը հաճախ էր վանք գալիս, ոչնչացնում է Արղությանցից ստացած նամակների մեծ մասը, որպեսզի թշնամու ձեռքը իրեղեն ապացույցներ չընկնեն. «Ի գալ չարաճճիկ Սարդարին, ի վտանգէ կասկածելով՝ պատռեցաք», գրում է մեկ այլ նամակում («Դիվան Հայոց պատմության», Թ, 223):

19-րդ դարի սկզբներից փոխվում են Ռուսաստանի դիտավորություններն ու արտաքին քաղաքականությունը Անդրկովկասի ու հայ ժողովրդի վերաբերմամբ, նրանց հայկական հետախնդրությունների բնույթն ու բովանդակությունը: Դիվանագիտական գաղտնաբծածուկ բանավարությունների

փոխարինելու են գալիս զինված միջամտությունները, շարժման մեջ են դրվում զորքերը, հնչում են պաշարող հրանոթների համազարկերը: 1801 թվականին Ռուսաստանի հովանավորության տակ են անցնում Վրաստանը և վերջինիս կից հայկական շրջանները, 1804-ին՝ Գանձակի խանությունը, ապա Ղարաբաղը, Նուխին, Բաքուն, Շաքին, Շիրվանը և հիշյալ խանությունների կազմում եղած հայկական բնաշխարհներն ու բնակավայրերը: 1804—1808 թթ., հաջորդաբար, ռուսները ձեռնարկում են մի քանի արշավանք դեպի Երևան:

Տեսնելով ռուսներին Այրարատյան դաշտում՝ ժողովուրդն իր հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների հետ ապրում է ուրախության ու բերկրանքի անմարելի պահեր, որոնց շատ շուտով, սակայն, հաջորդում են հուսախաբություն ու անավոր ողբերգական անցքեր: Մասնավորապես գեներալ Ցիցիանովի ապաշնորհությունն ու մեծամտությունը ո՛չ միայն խորտակում են հայոց հույսերը, այլև ռուս զորքը հասցնում գրեթե կործանման անդունդի եզրին. եթե չլինեին հայ ժողովրդի ու Էջմիածնի բոլորանվեր աջակցությունն ու օգնությունը, դժվար թե որևէ ռուս զինվոր կենդանի տուն դառնար Այրարատյան աշխարհից: Պահպանվել և մեզ են հասել ուշագրավ վավերագրեր՝ սփռված կայսերական Ռուսիայի դիվաններում, որոնցից պարզվում է, որ 1804 թ. ամռանը, մի քանի շաբաթվա ընթացքում, դատարկվում են Էջմիածնի ամբարները, և ռուս զորքին է տրամադրվում 4200 փութ ալյուր, 5600 փութ ցորեն, բազում սայլերով այլ սննդամթերք («Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին», փաստաթղթերի ժողովածու, հ. I, Երևան, 1972, էջ 246—247, 272—273, 275: «Ուղեգրություններ», հ. Զ, Երևան, 1934, էջ 105): Եթե դրան ավելացնենք վանքում ապաստանած ռուս զորքերի ու վիրավորների համար արվող ամենօրյա ծախսերը, ապա նրանց ընդհանուր արժեքը կհասնի շատ հազարների:

Վերոհիշյալ ճախող արշավանքների հետևանքով բազմահազար հայություն բռնությամբ քշվեց Պարսկաստանի խորքերը, իսկ շատ-շատերն էլ, 1804 թվականից սկսած, համայնքներով կամ մեծ խմբերով սկսեցին հեռանալ դեպի Վրաստան, Անդրկովկասի մյուս հայաշատ վայրեր, դեպի Շիրակ, Լոռի, Գանձակ և այլն: Անշքացավ ու կողոպտվեց Էջմիածնի վանքը:

Եվ օր-օրի ամայանում էր Հայաստան աշխարհը. մատների վրա էին հաշվվում բնակեցված գյուղերը. երբեմնի ծաղկուն դաշտերում ու անդաստաններում ոռնում էին սոված գայլերը, և երկիրը ծածկված էր մարդկանց ու ձիերի ոսկորներով: Այդ են տեսել ու նկարագրել նույն տարիներին Հայաստանով անցնող օտար ճանապարհորդները ... Ժողովրդական հերոսների ու վրիժառուների հետ, որոնցից ամենահայտնին Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի նախատիպերից մեկը՝ Ռոստոմ Աբովյանն էր, նահատակված Թավրիզում, 1804 թ. վերջերին: Այդ տարիներին հանուն հայրենի աշխարհի ու Մայր Աթոռի փրկության՝ գերմարդկային ճիգեր են թափել բազմաթիվ հոգևոր գործիչներ՝ կենդանի նահատակ անվանված Հովհաննես Ակնեցին, որը Վրաստանի հայոց հոգևոր առաջնորդն էր (1802—1810), Շամշադինի հաջորդ Գրիգոր Մանուչարյան վարդապետը (վախճ. 1835), Վաղարշապատի ծխատեր քահանա, անձանձիր ուսուցիչ ու մատենագիր Հովհան Ոսկերչյանը (1761—1834), Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդ Եփրեմ Զորագեղցին (1750—1835) և, վերջապես, Ներսես Աշտարակեցին, որի ավելի քան վաթսունամյա գործունեությունը, իբրև Մայր Աթոռի համեստ սպասավոր և բարձրաստիճան հոգևորական, իբրև Վրաստանի

և Բեսարաբիայի հայոց հոգևոր առաջնորդ (1814-ից) ու Ամենայն Հայոց կաթողիկոս (1843—1857), զարդարում է հայոց եկեղեցու ու նոր շրջանի պատմության էջերը: «Ա՜խ թէ իցէր, երանի՜ թէ լինիցէր, զի կատարիցէին բազմաց սրտից խորհուրդք, և գտանիցէր զբաղձալին իւր փրկութիւն Հայրենին մեր գաւառ և Մայր Աթոռն երկնանման սուրբ Էջմիածին»,—կարդում ենք հնօրյա նամակներից մեկում («Բանբեր Երևանի համալսարանի», 1978, № 2, էջ 13):

Ես անհրաժեշտություն չեմ գտնում հատուկ կանգ առնելու Դավիթ-Դանիելյան շրջանի վրա, որը թեպետև զուգադիպում է պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան բնաշխարհները՝ Գուգարքը, Տաշիրը, Շիրակը, Սյունիքը, Արցախը և հարակից մի քանի գավառներ, ռուսաց լայնածավալ կայսրությանը միանալուն, բայց նրանց կռիվները ճարպկորեն օգտագործվում էին շահագրգռված տերությունների կառավարող շրջանների ու դիվանագետների կողմից ի վնաս Էջմիածնի ու հայ ժողովրդի: Դրանք, ըստ էության, ստվեր էին գցում մեր ազգային դիմագծի վրա: Կորցնելով սառը դատելու ունակությունը և ազատություն տալով անձնական կրքերին՝ ոտնահարում էին մարդկային արժանապատվությունը և քրիստոնեական մարդասիրության վեհ սկզբունքները: Ո՛վ էլ Հովսեփ Արղությանցից հետո բազմելու լիներ հայրապետական գահին՝ պարթևահասակ ու եռանդուն Դավիթ Էնեգերցի Ղորղանյա՞նը, թե՞ հիվանդ ու հյուծված Դանիել Սուրմառեցին, երկուսն էլ ցանկանային էլ՝ չէին կարող դեմ գնալ հայոց համազգային տրամադրությանը և շեղել պատմության ընթացքը:

Հայաստանի ու հայության հոգևոր ու քաղաքական կյանքի վերածնման հանապարհն ընտրված էր պատմության թելադրանքով և ողջ ազգության կողմից: Այդ էր ձայնում, այդ էր հաստատում դարերի խորքից եկող լեգենդը հայոց ազատության մասին, որ քանիցս մեջ էին բերում իրենց աղերսագրերում հայ ազատագրական շարժման առաջնորդները, տալով նրան մարգարեական գուշակության տեսք: Վերհիշենք նաև մենք. «...Ժամանակներ անց անօրենները չափից ավելի պիտի մոլեգնեն՝ հարկադրելով քրիստոնյաներին ընդունելու իրենց նողկալի կրոնը, և այդ ժամանակ Մոսկովյան օգոստափառ տանից պիտի գա ոմն մեծ իշխան, շատ ավելի քաջարի, քան Ալեքսանդր Մեծը, որն իր ձեռքը պիտի առնի Հայոց թագավորությունը և ազատի քրիստոնյաներին» («Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ», Երևան, 1978, էջ 3):

1804—1808 թթ. երևանյան անհաջող արշավանքներին հաջորդած շուրջ քսան տարիներին, որոնք համընկան Էջմիածնի նոր կաթուղիկոսի՝ Եփրեմ Զորագեղցու գահակալության (1809—1831) և Ներսես Աշտարակեցու հայրենանվեր գործունեության ամենաբուռն շրջանին, իբրև Ամենայն Հայոց Հայրապետի գլխավոր խորհրդատու, հայ ազատագրական շարժման մեջ կատարվեցին լուրջ տեղաշարժեր՝ սկզբներում, ճիշտ է, դանդաղ ու աննկատ, բայց վերջերում՝ թավալգլոր արագությամբ: Դեպքերն հանգեցին մի այնպիսի լուծման, որ անհրաժեշտ էր անգամ կայսերական Ռուսիայի դիվանագիտության համար. մեկ-երկու տարվա գործ դարձավ Հայոց աշխարհի ու Մայր Աթոռի վերջնական փրկությունը պարսից դժոխքից: Եվ այս բոլոր անցքերի հորձանուտում, ամենուր, Ներսես Աշտարակեցին էր՝ իր անսպառ եռանդով, իր անվերջանալի թղթակցություններով, իր հանճարեղ կանխատեսումներով, իր իմաստուն ու ոգևորիչ խորհուրդներով, իր կտրուկ հրահանգներով:

Էջմիածնի հաստատեղույս պարիսպների ներսում, Վեհարանում և վրա-հայոց առաջնորդարանում (ուր Ներսես Աշտարակեցին էր) հիմա ավելի հաճախ սկսեցին երևալ օտարերկրյա դիվանագետները, միսիոներները, բնախույզ գիտնականներն ու ճանապարհորդները, որոնք հետազոտական աշխատանքից բացի ունեին նաև գաղտնածածուկ առաքելություններ: Նրանք անում էին գայթակղիչ առաջարկություններ, շռայլում առատ խոստումներ, նրանց մարդասիրական խորհուրդներին վերջ չկար:

Էջմիածնում հյուրընկալվեցին նաև կովկասյան հատուկ բանակի հրամանատար և երկրամասի գլխավոր կառավարիչ գեներալ Երմոլովը (1817, մայիս), իսկ ապա՝ ռուս նշանավոր գրող ու դիվանագետ Գրիբոյեդովը (1820, հունվար): Վերջինիս հետ ունեցած զրույցի ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետը Էջմիածնի վիճակը համեմատում է «տատասկների մեջ ընկած վարդի հետ...» («Ա. Ս. Գրիբոյեդովի երկերի լիակատար ժողովածուն», հ. III, Պետրոգրադ, 1917, էջ 66, ռուսերեն): Հիմա արդեն ո՛չ մեկի համար գաղտնիք չէին ռուսների դիտավորությունները: Ըստ այդմ՝ կայսրության սահմանն առաջիկայում հասնելու էր մինչև Արաքս ու Ախուրյան գետերը, մինչև բիբլիական Արարատի բարձունքները: Անգլիական ու ֆրանսիական դիվանագետներն ու նրանց գործակալները՝ Ջեմս Մորիեր, Ռոբերտ Գարդան, Պիեր Ամեդի, Ժոբեր, Դավիթ-խան Ծատուրյան, միսիոներներ Հենրի Մարտին, Ջոզեֆ Վոլֆ և ուրիշներ, ընդհակառակը, աշխատում էին խախտել հայ ժողովրդի, նրա աշխարհիկ ու հոգևոր առաջնորդների հավատը Ռուսաստանի նկատմամբ, փորձելով մերձեցնել նրանց քրիստոնյա Արևմուտքի տիրակալների հետ: Ավետարանական քարոզիչներն, օրինակ, իբր, անկանխակալ մարդիկ և Քրիստոսի ուսմունքի հետևորդներ՝ տգիտության մշուշը Հայոց աշխարհից հալածելու համար դպրոցներ բաց անելու գայթակղիչ խոստումներ էին տալիս:

Բնականաբար, պարսից կառավարությունը չէր կարող անտարբեր դիտողի դերում մնալ և չվերանայել իր քաղաքականությունը Էջմիածնի և հայ ժողովրդի նկատմամբ, քանի որ հենց նրա դեմ էր ուղղված ազատագրական պայքարի ելած հայ ժողովրդի սուրը: Թագաժառանգ Աբբաս Միրզան և Երևանի պարսից նահանգապետ Հուսեյն Ղուլի խանը գործունեության նոր ծրագիր են մշակում. նրանք առերես աշխարհաշինության օրինակներ են ցույց տալիս, կառուցում ու վերանորոգում են ջրանցքներ, ջանում սիրաշահել հայ ավագանուն և Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականությանը, մինչև իսկ մոռացության մատնում դարասկզբներին Վրաստան հեռացված հայերի հանցանքը տերության դեմ, արտոնում ետ վերադարձածներին տեր դառնալու իրենց գյուղերին ու կալքին: Նրանք լռելյայն համաձայնվում են Ռուսաստանի առաջարկներին՝ Էջմիածնի վանական կառավարիչների ու եկեղեցական թեմերի նոր առաջնորդների նշանակման վերաբերմամբ:

Բայց այս ամենը միայն ձև էր, որ կարող էր մոլորության մեջ գցել բանին անտեղյակներին: Այդ նույն շրջանում Էջմիածնի վանքում, որպես վանական դպրոցի աշակերտ, ուսանող Աբովյանը հետագայում պատմում է. «Ես տեսել եմ և հիշում եմ Էջմիածնի վիճակը» պարսից բռնապետության օրերին, «երբ ո՛չ միայն Երևանի սարդարը, այլև նրա բազմաթիվ չնչին խաներն ու բեգերը, հենց որ ցանկանային՝ գալիս էին քեֆ անելու և վանքի հաշվին իրենց գրպանները լցնելու: Նրանց ընդունելությունը, հյուրասիրությունը և ճամփու դնելն ամեն անգամ աղմկալի, հանդիսավոր ու

բազմամարդ էր լինում: Քրիստոնեական դրոշակներով, խաչերով ու սրբապատկերներով, զանգերի ղողանջի, եկեղեցական երգեցողության հընչյունների տակ և հարուստ նվերներով էր տեղի ունենում նրանց դիմավորումը, բայց, այնուամենայնիվ, շատ անգամ էր պատահում այդ դևերի ներկայությամբ թափելու և՛ արցունք, և՛ արյուն» (հ. VII, էջ 128): Գրեթե ամեն օր ոտնահարվում էին հայի կրոնական սրբություններն ու ազգային արժանապատվությունը, արյունոտվում առանց այն էլ նրա վիրավոր սիրտը:

Եվ հայոց Մայր տաճարում, առավոտյան և երեկոյան ժամերգությունների ու հնկման պահերին շարունակ նույն աղոթքն էր ուղղվում դեպի երկինք, նույն սաղմոսերգության ձայները հնչում. «Անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց. այլ դու, Տէր Աստուած իմ, գթած ես և ողորմած. երկայնամի՛տ, բազումողո՛րմ և ճշմարի՛տ, նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ: Տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ. կեցո՛ զորդի աղախնոյ քոյ...»: «Ի սրոյ չարէ փրկեա՛ զիս և ապրեցո՛ զիս ի ձեռաց որդւոց օտարաց...»: «Դատեա՛, Տէր, զայնոսիկ, ոյք դատեն զիս. մարտի՛ր ընդ այնոսիկ, որ մարտնչին ընդ իս: Ա՛ռ զզէն և զասպար քո, և արի՛ յօգնել ինձ: Հա՛ն զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց...» (Սաղմոս ԶԵ, ՃԽԳ, ԼԴ):

Վերջին ռուս-պարսկական պատերազմը, որն անսպասելիորեն պայթեց 1826 թ. հուլիսի 16-ին, Այրարատյան աշխարհում վառեց մի ահավոր գեհեն՝ հայ ժողովրդին բերելով նորանոր տառապանքներ ու բազում աղետներ: Սկսեցին երերալ ռուսական տիրապետության հիմքերն Անդրկովկասում. ընդդեմ Ռուսաստանի ոտքի ելան երկրամասի մոլեռանդ մահմեդականությունը և իշխող դասը, որոնք նախապես գաղտնի կապերի մեջ էին մտել պարսիկների հետ, սկսեց խլրտալ դեռ անկախության հույսը չկորցրած վրացական ազնվականությունը: Եվ բոլորն էլ ամենավայրենի ձևով հալածում ու կոտորում էին հայերին, գերեվարում նրանց, որպեսզի ռուսներն այլևս վստահելի հենարան չունենան: «Բայց,—ինչպես գրել է Խաչատուր Աբովյանը,—հայոց արդար սիրտը, ուղիղ սերը, որ Ռուսաց հետ ունեին, է՛ն ժամանակ էլ նրանց չթողեց, երբ թուրը գլխներին խաղում, որդի ու զավակ դոշներին, առաջներին սուր էր քաշվում յա կրակումն էրվում» (հ. III, 121):

Հայոց պատմությունը երբեք չի մոռանա այն անօրինակ սխրանքները, որ կատարել են այդ կռիվների ընթացքում ականավոր եկեղեցական գործիչներ Ներսես Աշտարակեցին, Գրիգոր արքեպիսկոպոս Մանուչարյանը և ուրիշներ, մի կողմից՝ ազգի ուժերը համախմբելու և փրկության հավատը վառ պահելու գործում, մյուս կողմից՝ իբրև զինվոր կամ աշխարհազորական, անձամբ կռվի դաշտում կոփելով գալիք հաղթանակը: Թե ինչ կշիռ ու արժեք ունեին Ներսես ու Գրիգոր արքեպիսկոպոսների խոսքն ու գործը Անդրկովկասի ռուսական իշխանությունների աչքում, ինչ մեծ հեղինակություն էին նրանք վայելում իրենց ազգակիցների և երկրամասի մյուս ազգերի շրջանում, դրա պերճախոս ապացույցները մեզ տալիս են պատմական հարյուրավոր վավերագրեր, ռուս ռազմական արվեստի պատմաբանների երկասիրությունները, նաև՝ մինչև մեր օրերը հասած ժողովրդական զրույցներն ու լեգենդները:

Դեռ պաշտոնապես Պարսկաստանի դեմ պատերազմ չհայտարարված, դեռ բարձր շրջաններում իրադրությունները լրջորեն չկշռադատված՝ Ներսես Աշտարակեցին հրաշալիորեն ըմբռնելով այս պատերազմի սերտ կա-

պը հայոց բախտի հետ, գործի էր լծվել, իր բոլոր ուժերով ձգտում ու ջանում էր օգնել ռուսներին, որ գեթ այս անգամ նրանք հաղթականորեն մուտք գործեն Այրարատյան աշխարհ, ընդմիշտ հաստատվեն այնտեղ և հովացնեն մարդկանց դարերով պապակ սրտերը: Անդրկովկասի ողջ հայությանն ուղղված իր կոչով Ներսես Աշտարակեցին հորդորում ու հրահանգում էր բոլորին՝ հավատարիմ մնալ Ռուսաստանին, համախմբվել ռուսական դրոշակի ներքո և ոչինչ չխնայել գալիք հաղթանակի և հարենիքի փրկության համար: «Մի՛ տարակուսիք, մի՛ վհատիք և մի՛ դողաք...— պատգամում էր Ներսեսը,—Բոցավառվեցե՛ք արիության ոգվով, դիմագրավեցե՛ք մեր թշնամյաց բոլոր խորամանկությանցը և ավազակությանցը, հետևեցե՛ք ձեր սրտի մեջ դրոշմված արժանագով հավատարմության թելադրությանը և խոհեմությամբ տնօրինեցե՛ք ձեր անելիքը... իսկ եթե հարկ լինի՝ մի՛ խնայեք ձեր արյան վերջին կաթիլը: Հավատացած եղե՛ք, որ Աստուծո հրաշալի փրկությունը կպահպանե ձեզ ամեն վտանգից, որպես ներկայումս, այնպես և հազգե ազգ, իսկ աստվածային շնորհը և Ռուսիո օգոստափառ ինքնակալի ողորմած ուշադրությունը պսակներ կնյուսեն թե՛ ձեզ և թե՛ բոլոր ձեր համազգյաց» (Ա. Դ. Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., մասն Ա, Տփղիս, 1894, էջ 242—243):

Իսկ երբ թշնամու դեմ հարձակողական գործողություններ սկսելու մասին կայսերական հրովարտակն ստացվեց Տփղիսում, և մի քանի օր անց Ներսես Աշտարակեցուն այցելեց գեներալ Երմոլովը՝ պաշտոնապես խնդրով ռազմական գործողությունների ողջ ընթացքում լինել իր հետ՝ ռազմի դաշտում, և միաժամանակ երաշխիքներ տալով, թե այս կոիվների արդյունքն է լինելու Հայոց աշխարհի փրկությունը և հանուր հայության տնտեսական ու քաղաքական կյանքի վերածնությունը, Շամշադինի առաջնորդ Գրիգոր Մանուչարյանին հղած նամակում Ներսես Աշտարակեցին հրահանգում էր.

«Յայտնեա՛ ամենայն մերազանց, սրբազան եղբայր, և քարոզե՛ա նոցա զօրանալ հզօրանալ ընդդէմ ամենայն թշնամեաց, և առաւել ևս արիանալ, և ըստ հաւատարմութեան իւրեանց ջերմեռանդութեամբ բազմաւ յառաջադէմ հանդիսանալ, և պատրաստել զանձինս բազմութեամբ հեծելոց լինիլ բազկակից զօրանց Ռուսաց և դիմել յերկիր Հայրենեաց ի Հայաստան աշխարհ, ի խնդրել զվրէժ իրաւանց մերոց նախնեաց և նորին ժառանգաւորաց»:

Ներսես Աշտարակեցին ազդարարում է նաև, որ ինքն է տանելու համազգեաց (Հայոց զորքը) դեպի պատերազմ (Մատենադարան, Ներսես Աշտարակեցու դիվան, № 166/625):

Մի իրողության վրա ևս կուզեինք ուշադրություն հրավիրել: Ռուս-պարսկական պատերազմի ճակատագրական օրերին Պետերբուրգի բարձր իշխանություններն ու անձամբ կայսրը լիակատար հավատ չընծայելով Անդրկովկասի ռազմական ղեկավարների ու իրենց գաղտնի գործակալների հաղորդած լուրերին ու զեկուցագրերին, հանձնարարում են Խաչատուր Լազարյանին՝ վստահելի ու թարմ լուրեր հայթայթել Հայկական շրջաններից: Եվ այս առումով մեծ օգնություն են ցույց տալիս Ներսես Աշտարակեցին, Մելքիսեդեկ քահանա Ղամազյանցը և ուրիշներ: Թագավորը գոհ էր հատկապես Աշտարակեցու տեղեկագրերից, որոնք պաշտոնականների համեմատությամբ՝ ավելի շուտ են տեղ հասնում, ավելի ընդարձակ էին, թարմ ու վստահելի և հնարավորություն էին տալիս ճիշտ կողմնորոշվելու (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», գ. V, էջ 349):

Պատերազմի առաջին ամիսների տարեգրության ամենափայլուն էջերից մեկը Շամխորի ճակատամարտն էր, որին իր կամավորական հեծյալ ջոկատով՝ թվով ավելի քան հինգ հարյուր սպառազեն հայեր, մասնակցում էր Գրիգոր արքեպիսկոպոս Մանուչարյանը: Սա խաղաղ ժամանակներում հեզ ճգնավոր էր ու օրինապահ վանական, բայց դարասկզբից սկսած, ամենայն անգամ, երբ վճռվում էր Հայաստանի բախտը, վերափոխվում էր ու դառնում մի անվեհեր, մոլեգին զորական, մխրճվում կռվի ամենավտանգավոր տեղերը, ջարդում ու ցրում Հայրենիքի ու Հավատի թշնամիների ուժերը... սարսափահար թուրքերը նրան կոչում էին «Դելի Քեշիշ» ու խուճապահար փախչում: Այդպիսին էր Գրիգոր Մանուչարյանը նաև Շամխորի դաշտում, 1826 թ. սեպտեմբերի 3-ին, Ղազախ-Շամշադինում, Եփրեմ կաթողիկոսին Հաղպատի վանքից Թիֆլիս փոխադրելիս և 1826 թ. մյուս կռիվներում:

1827 թ. գարնանից պատերազմական գործողությունները փոխադրվեցին Այրարատյան դաշտ: Կռիվների ոգին, սկզբից մինչև վերջ, Ներսես Աշտարակեցին էր: Ապրիլի 13-ին, ռուսական զորքերի հետ հասնելով Էջմիածնի վանք, Ներսեսը եռանդուն կերպով լծվում է գործի և ամենուր ափոում իր խրոխտ կոչերն ու հրահանգները: Դրանցից առաջինը, որ ուղղված էր Երևանի ու Նախիջևանի գավառներում ապրող հայությանը, ձայնում էր. «Երկիր Երևանու և Նախիջևանու յայսմհետէ այնպէս է յատկացեալ տերութեան Ռուսաց, որպէս Թիֆլիզ, Էլիսաւէտօպոլ, Աստրախան և այլ ամենայն լայնածաւալ սահմանաց նորին գաւառք և նահանգք, և զօրք նորա չունին վերադառնալ ըստ առաջնոցն, այլ կան և կալոց են յաւիտեան ի հովանաւորութիւն Հայրենեաց Հայաստանի և ի սփոփանս նեղեալ և վշտացեալ ժառանգաւորաց նորին որդւոց Արամայ: ...Այլ առանց ամենայն կարծեաց և առանց բնաւին ամենայն տարակուսանաց հաւաստի լինիցիք,— շարունակում է արքեպիսկոպոսը,—զի այսուհետև Երևանն ու Նախիջևանն Ռուսաց տերութեանն են, և ո՛չ այլոց ուրուք, և ըստ այսմ դուք ամենեքեան հոգ կալջի՛ք պահպանել զարժանաւորն հաւատարիմ հպատակութեան մեծ կայսերութեան ամենայն Ռուսաց...» (Մատենադարան, Ներսես Աշտարակեցու դիվան, № 166/785):

Ներսես Աշտարակեցու առինքնող անհատականությունը և գործելու անսպառ եռանդը Էջմիածինը դարձնում են ռազմական գործողությունների ղեկավարման և հայ կամավորական ուժերի հավաքման գլխավոր զորակայանը: Ու իրար են հաջորդում ռուսական զորքերի փայլուն հաղթանակները. ապրիլի 16-ին՝ Սև ջրի գլխին, մայիսի 9-ին՝ Հրազդան և Մեծամոր գետերի միջև ընկած դաշտում, Արաքսի ափին, Սարվանլար գյուղի մոտ: Հուլիսի 1-ին՝ Արայի լեռան ստորոտում: Ավելի վաղ՝ շրջապատվում է նաև Երևանի բերդը:—«Փայլի դաշտն Արարատեան իբրև հաղթական հանդիսական»,—հրճվանքով գրել է Ներսես Աշտարակեցին իր նամակներից մեկում (նույն տեղում, № 166/766):

Ամառվա շոգերի պատճառով կռիվները առժամանակ դադարեցվում են, և ռուս զորքերը մի կարճ միջոց թողնելով բերդի պաշարումը՝ հեռանում են դեպի Ապարանի զով վայրեր: Բայց Ներսես Աշտարակեցին չի՛ լքում հայոց գլխավոր սրբավայրը. ամրացնելով Էջմիածնի պարիսպները՝ նա ջանադրությամբ հետևում էր թշնամու գործողություններին, աշխատում ժամանակին հնձել, կալսել և վանքի շտեմարաններում ամբարել ցորենն

ու հացահատիկը, դարմանել հիվանդներին, օգնել շրջակա գյուղերից ու Երևանից վանքում ապաստան գտած հարյուրավոր սովալլուկ հայերին:

Ճակատագրական այս օրերին իրենց ազատաբաղձ ու եռանդուն առաջնորդից ետ չէին մնում նաև եկեղեցու մյուս սպասավորները: Կուզեինք հատկապես հիշել Հարություն վարդապետ Ալամդարյանին, որը Տփղիսում կազմակերպում ու Հայաստան է ուղարկում հայ կամավորական զորքի ջոկատները, հայացնում ապագա հայկական զորքի զինավարժության կանոնները, իր կրակոտ քարոզներով խանդավառում մարդկանց:

1827 թ. օգոստոսի կեսերին տեղի ունեցավ այն մեծ կռիվը, որն իր ընթացքով ու ելքով իրավամբ համեմատվում է պատմական անցյալի ամենանախշոր ճակատամարտերի հետ: Նույն ամսի 13-ից Էջմիածնի շուրջ կենտրոնացնելով 30.000-անոց մի բանակ, պարսիկները սկսում են գնդակոծել վանքի պարիսպները: Էջմիածնի անկումը, ըստ էության, համազոր էր արևելահայության ազատագրական հույսերի լիակատար կործանման, ուստի նրանց հոգևոր առաջնորդը՝ Ներսես Աշտարակեցին, իր հայ կամավորներով և վանքում մնացած ռուսական փոքրաթիվ կայազորով՝ մի քանի հարյուր հիվանդ զինվորներ, քաջությամբ պաշտպանվում էր: Էջմիածնի վանքի հիմնահատակ կործանումը վճռված հարց էր, և այդ օրհասական պահերին Ապարանի բարձունքներից օգնության է շտապում հայասեր ու մարդասեր գեներալ Աֆանասի Կրասովսկին, հետևելով ընդամենը 3000 զինվոր: Քասախի կիրճում, Աշտարակի մոտ և Օշականի դաշտում են ծավալվում գլխավոր գործողությունները: Մարդկային անավոր սպանդը շարունակվում է ամբողջ օրը:

Շատ տարիներ հետո, անդրադառնալով այդ մեծ ճակատամարտին, ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը զուգահեռներ էր անցկացնում Ջիրավի ճակատամարտի հետ: Այդ «մեծ դաշտում մի կողմը պարսկական թշնամի զորքն էր ծփում՝ «իբրև ծով իմն ահեղ», իսկ նրա դեմ Հայաստանին օգնության եկած բյուզանդական բանակն էր կանգնած իր խաչանիշ դրոշակով՝ «իբրև լեառն ադամանդեայ». և մինչդեռ Արևելքի ու Արևմուտքի էս ահագին զորություններն իրար եկած՝ վճռում էին հայ ժողովրդի ճակատագիրը, վերև՝ Նպատի նվիրական բարձունքին, հայոց Մեծ Ներսեսը գոչում էր «առ Տէր՝ բազկատարած հայցմամբ խնդրելով»՝ օգնել հայերին, որոնց աշխարհքը դարձել էր «սպանդարան մարտիրոսաց»:— Թումանյանի ընկալմամբ՝ ավելի սրտառուչ ու վեհ էին Օշականի ճակատամարտի անցքերը: «Եվ մինչդեռ ամբողջ օրը Արարատյան դաշտում, Օշականի ձորում, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի շուրջը որոտում էր պատերազմը, մի ուրիշ մեծ Ներսես (Ներսես Աշտարակեցին—Պ. Հ.) սեղան էր հանել Հայաստանի սրբությունները և Լուսավորչի գերեզմանի առջև տարածված՝ ամբողջ միաբանությամբ առ Աստված էր աղաղակում պատերազմի ելքի և պարսկական դժոխքի մեջ այրվող իր ժողովրդի փրկության համար. և աչքերը հանած, լեզուները կամ ոտներն ու ձեռները կտրատած հայ մարդիկ Մայր տաճարի զանգակների տխուր ղողանջյունի վրա սողում էին Էջմիածին կամ դեպի քրիստոնյա բանակը» (Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1951, էջ 204—205):

Ի դեպ, Թումանյանի ասածների մեջ բանաստեղծական չափազանցություն բնավ չկա: Ներսես Աշտարակեցին ինքը մի առիթով ասել է.

«Յուսացեալք յօգնականութիւն տեառն Աստուծոյ, միաբան առ հասարակ փութացաք ի սուրբ եկեղեցին և, մատուցեալ ջերմեռանդական աղօթս,

բազում արտասուքս խնդրեցաք զօգնականութիւն զերկնից և յէտ կատարման պաշտամանց ելեալ ի բարձունս տանեայց սրբոյ կաթուղիկէին՝ կայաք ի զննին» («Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու արձագանքները...», էջ 44—45):

Օշականի ճակատամարտը վճռեց ռուս-պարսկական պատերազմի ելքը: Շատ չանցած՝ ռուսական զորքերը տոնում են նոր, փայլուն հաղթանակներ. սեպտեմբերի 19-ի լույս 20-ի գիշերը անձնատուր է լինում Սարդարապատի բերդը: Հոկտեմբերի 24-ին վերսկսվում է Երևանի բերդի պաշարումը, իսկ հոկտեմբերի 1-ի առավոտյան, լուսաբացի հետ, այն անձնատուր է լինում. բարբարոսների դժոխատագնապ գերությունից և անօրեն բռնակալությունից, հարյուրամյակներ շարունակված տառապանքներից ի վերջո փրկվում են Արարատյան երկիրը և Էջմիածինը:

Էջմիածինը արտահայտելով ողջ հայության կամքը, ի նշան երախտագիտության՝ կոթող է կանգնեցրել Օշականի ճակատամարտում նահատակված ռուս զինվորների ու զորականների հիշատակին, թվով 1131 մարդ, և ամենամյա հատուկ տոն սահմանել, մի կարգ, որ անխափան կատարվում է շատ տարի:

Հենց այսօր, այդ նույն վայրում Ամենայն Հայոց ազգաշեն Հայրապետ Վազգեն Առաջինի բարձր հովանու տակ տեղի ունեցավ հերթական գոհաբանական մաղթանքը Մայր Աթոռի փրկության համար զոհվածների հիշատակին...

Դեռ շարունակվում էր ռուսական զորքերի հաղթարշավը Արաքսի այն ափին, բուն պարսկական հողերում, երբ Ներսես Աշտարակեցին քննում էր վերածնված Հայոց աշխարհի սահմանների ու բնակեցման հարցերը և այդ առթիվ իր նկատողությունները հայտնում ռուսական իշխանություններին ու ռուս դիվանագետներին: Հայաստանի փրկությունն այն ժամանակ կլիներ լիակատար, խորհում էր Ներսեսը, եթե Այրարատյան գավառում, Նախիջևանում, Փայտակարանում և ռուսական սահմանի ողջ երկայնքով բնակեցվեին բացառապես հայեր: Իրերի ընթացքը ցույց էր տալիս, որ ռուսները հազիվ թե իրենց ձեռքը պահեին Թավրիզը, Խոյը, Սալմաստը, Ուրմիան և Մարաղան: Այդ դեպքում անհրաժեշտ էր հիշյալ գավառներում բնակվող հայերի հոծ զանգվածները գաղթեցնել և վերաբնակեցնել Նախիջևանի, Երևանի ու Ղարաբաղի սահմաններում: Հաշտության պայմանագիրը, խորհուրդ էր տալիս նա, պետք է կազմվեր այն ոգով, որպեսզի Ղազվինի, Համադանի, Թեհրանի, Սպահանի գյուղերի, Նոր Ջուղայի, Շիրազի, Բուշերի և այլ վայրերի հայերը նույնպես իրավունք ստանային վերաբնակվելու Ռուսաստանին անցած հողերում: Վերջապես՝ Երևանյան նահանգի սահմանները որոշելիս ելակետ պետք է լիներ ո՛չ թե Արաքս գետը, այլ նահանգի պատմական սահմանը, որն անցնում էր Մակուի ձորով, Արարատի գագաթով և Արարատից ձգվող լեռնաշղթայով, որը Երևանյան նահանգը բաժանում է օսմանյան տերությունից (Բայազետի փաշայությունն): Դրա շնորհիվ բաց կլինեին Երևանյան նահանգի բոլոր ճանապարհները և Թուրքիայի տիրապետության տակ հեծող հայերի հետ ազատ երթևեկության և շփումների ուղիներ կբացվեին (տե՛ս Մատենադարան, Ներսես Աշտարակեցու դիվան, № 166/822, թվագրված է՝ 1827 թ. հոկտեմբերի 6):

Թուրքմենչայի դաշնագիրը, որ ստորագրվեց 1828 թ. փետրվարի 10-ին, կազմված էր հենց այս ոգով:

Շուտով Ներսես Աշտարակեցու ու նրա համախոհների՝ Թադեի վանքի

առաջնորդ Բարսեղ Կեսարացու, Էջմիածնի միաբան Ստեփանոս Եղոբյան եպիսկոպոսի և ղարաբաղցի Նիկողայոս վարդապետի ջանքերով և ռուսական իշխանությունների սերտ համագործակցությամբ սկսվեց պարսկահայերի գաղթը:

Պարզ պատկերացնելու համար, թե ի՞նչ էր իրենից ներկայացնում ազատագրված Հայաստանը, կամ, ինչպես այն կոչվում էր պաշտոնապես՝ Հայկական նահանգը, որի տարածքը հավասար էր այժմյան ՀՍՍՀ-ին, և ինչո՞ւ այնպես կենսական՝ նրա բնակեցման հարցը, հիշեցնենք, որ պարսիկներից ժառանգություն էին մնացել հազարավոր ավերակ քաղաքներ ու գյուղեր և մի քանի տասնյակ կիսակենդան բնակավայրեր, ուր ապրում էր ընդամենը 3337 ծուխ կամ 18576 շունչ հայ (տե՛ս նույն տեղում, № 166/1169): Հայաստան անվանումը դարձել էր սոսկ աշխարհագրական հասկացություն, և Ներսես Աշտարակեցին իր հառաջիմացությամբ այն օժտում էր իրական բովանդակությամբ և հաստատուն հիմքերը դնում ազատագրված Արևելյան Հայաստանի:

Մեծ են Ներսես Աշտարակեցու ծառայությունները հայ ժողովրդին և Մայր Աթոռին նաև Հայկական նահանգի ժամանակավոր կառավարչության շրջանում, որի երեք անդամներից մեկը նա էր: Այդ առումով հատուկ արժեք է ստանում նահանգապետ գեներալ Կրասովսկու պաշտոնական կարծիքը՝ հայտնված ռուսական զորքերի գլխավոր շտաբի պետ, գեներալ ֆելդմարշալ Դիբիչին ուղղված զեկուցագրում, 1828 թ. հունվարի 5-ին. «Արդարացի իրավունք ունեմ զեկուցելու Ձերդ պայծառափայլությանը, որ սրբազնագույն արքեպիսկոպոս Ներսեսը՝ հայ ժողովրդի հովիվը, բոլոր առումներով արժանի է հիացմունքի և իր անզուգական գործունեությամբ կարևորագույն օգնություն է ցույց տալիս ինչպես տեղիս երկրամասում կարգ ու կանոն հաստատելուն, այնպես էլ հարևան ժողովուրդների շրջանում կողմնակիցներ շահելուն» («Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին», փաստաթղթերի ժողովածու, հ. II, Երևան, 1978, էջ 442, ռուսերեն): Իսկ մի առ ժամանակ հետո, երբ նա ընդմիշտ թողնում էր Հայաստանը, Երևանի ռուսական զորքերին ուղղված հրաժեշտի հրամանում (1828, փետրվարի 11) ծանուցում էր ի գիտություն բոլորի. «Չեմ կարող իմ ջերմ երախտագիտությունը չարտահայտել սրբազնագույն արքեպիսկոպոս Ներսեսին՝ Երևանյան մարզը կառավարելու շրջանի իմ անխոնջ աշխատակցին, որի ուղղամտությանը, իմացություններին և շրջահայեցողությանն եմ ես պարտական մեր նոր համաքաղաքացիների բարօրությանը վերաբերող օգտակար շատ ձեռնարկումների համար» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1978, № 2, էջ 213):

1828 թվականի գարնանը սկսվեց ռուս-թուրքական պատերազմը. ռուսներն անցան Արփաչայը և մեկուկես տարում գրավեցին Կարսը, Արդահանը, Ալաշկերտը, Ախալցխան, Ախալքալակը, Բայազետը, Բաբերդը, Կարինը: Սկսվեց նաև հիշյալ գավառների հայության մեծ գաղթը դեպի Ծիրակ, Ախալցխա և Ախալքալակ: Այս անցքերի մեջ էլ վիթխարի դեր է խաղացել Բարձր Հայոց հոգևոր առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին, որը ո՛չ միայն թուրքական ոտնձգություններից պահպանում է իր հոտի իրավունքները և առաջնորդում նրանց ռուսական օրինյալ տերության սահմանները, այլև կորստից փրկում մշակութային բազմաթիվ եզակի արժեքներ:

Եվ այսպես, տարիների հետ վերածնվում ու վերաշինվում են Այրա-

բատյան աշխարհն ու Մայր Աթոռը, համախմբվում ու ազգային ինքնամանաչման է գալիս հայ ժողովուրդը, սկիզբ է դրվում մշակութային նոր ու հարուստ կյանքի և լուսավորական շարժման:

Դարերով ձգտելով մի բարերար տերության հովանու տակ ազգորեն համախմբվելու և մայրենի լեզուն ու հայրերի սուրբ հավատը ազատորեն պաշտելու և պաշտպանելու, դարերով, ի դեմս Ռուսաստանի, տեսնելով այն հզոր ուժը, որի օգնությամբ ու շնորհիվ հնարավորություն պիտի դառնար հայոց կործանված թագավորության վերածնունդը, բայց և զգալով, որ դեռևս շատ հեռու է լուսաշող ու հուսավառ գալիքը, մարդիկ աչքերը փակում էին այն անմարելի հավատով, որ եթե ո՛չ իրենք, ապա գեթ իրենց ազգունները կլսեն ռուս զինվորների ոտքերի դոփյունը Այրարատյան դաշտում:

Մերժելով բրիտանական հովանավորության վերաբերյալ անգլիացի ավետարանական քարոզիչ Ջոզեֆ Վոլֆի արած գայթակղիչ առաջարկությունները, 1825 թ. Ներսես Աշտարակեցին ասել է. «Դեռ երկու հարյուր տարի առաջ հայը հովանավորություն սպասում էր միայն ռուսաց պետությունից... Մեր նախնիքն ու հայրերը, չարժանանալով այդ հովանավորության, կտակեցին իրանց երեխաներին, թե երբ կգա այդ հովանավորությունը, հայտնեն իրանց գերեզմաններին, և այն ժամանակ կհանգստանա իրանց ազգունը» (Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դրպրոցի, Տփղիս, 1914, էջ 96):

Ներսես Աշտարակեցուն ու իր ժամանակակիցներին առաջինը բախտ վիճակվեց կատարելու երջանկահիշատակ նախնիների սուրբ պատվիրանը: Տարիներ անց վերհիշելով այդ սրտառուչ պահը՝ նա պատմել է. «Գտնվելով 1827-ի պատերազմի մեջ պարսիկների դեմ, ես, երբ մեր զորքերն անցնում էին Աշտարակ գյուղով, որ իմ հայրենիքն է, հրավիրեցի հայտնի գեներալ Կրասովսկուն՝ մի քիչ հետևել ինձ, և տարա նրան իմ հոր գերեզմանի մոտ ու պատմելով այդ գեներալին այն պատվիրանը, որ արել էր ինձ հանգուցյալը, ես ձայնեցի դեպի գերեզմանը. «Հա՛յր, սիրելի իմ հա՛յր. կատարվել է քո մարգարեությունը, քո ակնկալությունն արդարացավ. եկել է մեզ մոտ ռուսաց հովանավորությունը. ականջ դի՛ր, ահա նրա հաղթական զորքը, փայլուն զենքերով, փողերի ու ծնծղաների աղմուկի տակ, անցնում է մեր բնակավայրերով, մոտենում է թշնամուն և խորտակում է նրա անսանձ հպարտությունը հենց իր դռների առաջ: Ականջ դի՛ր, հայր, լսի՛ր քո որդիների բարօրությունը, լսի՛ր, և թո՛ղ հանգստանա քո ազգունը»: Արտասուքները չթողին,—ասում է Ներսեսը,—որ շարունակեմ խոսքս, և առաքինի ու զգայուն գեներալ Կրասովսկին՝ հուզված մինչև հոգու խորքը, հազիվ կարողացավ ինձ էլ, իրեն էլ հեռացնել իր համար այնքան անակնկալ այդ տեսարանից» (Նույն տեղում, էջ 99—100):

Երևանի բերդի անկումը և Արարատյան աշխարհի ազատագրումը սկիզբ դրին հայ ժողովրդի պատմական բախտի մեծ շրջադարձի և Ամենայն Հայոց Կաթողիկոսության գործունեության նոր շրջափուլի՝ քրիստոնյա տերության հովանու տակ: Տարիների ընթացքում այն նշանավորվեց վանական ներքին կյանքի վերակառուցումով, Էջմիածնի գիտական միաբանության աստիճանական ձևավորմամբ, մշակութային ու կրթական մեծ վերելքով: Էջմիածնի աշխարհահռչակ Մատենադարա՛նը, որի փաստական հիմքերը դրվեցին 1827-ին, Ներսես Աշտարակեցու հրահանգներով և Մանվել վարդապետ Կյումուշխանացու ջանքերով, Գևորգյան ճեմարա՛նը, հայրա-

պետական պաշտոնաթերթ «Արարատ» ամսագի՛րը, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանի, Վահան վարդապետ Բաստամյանի, Մայր Աթոռի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի, Գարեգին վարդապետ Հովսեփյանի, Կոմիտաս վարդապետի և շատ ուրիշների հոգևոր սիրանքն ու հայագիտական ժառանգությունը, մշակութային բազմաթիվ ուրիշ արժեքներ՝ ստեղծված Ներսես Աշտարակեցու, Գևորգ 4-րդ Կոստանդնուպոլսեցու, Խրիմյան Հայրիկի հայրապետության տարիներին, պտուղներն են այն մեծ իրադարձության, որ կոչվում է Ռուսաստանի օգնությամբ և հայ ժողովրդի զինակցությամբ Արևելյան Հայաստանի փրկությունը պարսկա-թուրքական դժոխքից:

Արևելյան Հայաստանի ազատագրման օրերից անցել է ավելի քան հարյուր հիսուն տարի: Շատ բան է փոխվել այդ ընթացքում՝ հայ ժողովրդի կյանքում ու պատմության մեջ: Համազգային ողբերգության ու կոտորածների վիշտն ու վերքերը արդեն սպիացել են և կամ մխում են դանդաղ, սերունդների հոգում ու հիշողության մեջ: Վերստին մոխիրներից վերածնվել է հայոց հին հայրենիքը, հավասար անդամը դառնալով սովետական ժողովուրդների մեծ Միության:

Եվ այսօր, երբ վերստին հետադարձ հայացք ենք ձգում հայության անցած ճանապարհի վրա, վերաքննում անցյալի դեպքերն ու դեմքերը, մասնավորապես անձն ու գործը նրանց, որոնք այն խավար ժամանակներում, բռնապետության ճիրանների մեջ հանճարեղորեն կանխատեսել են գալիքը և նախապատրաստել մեր այսօրը, դրել հայ ժողովրդի ազգային համախմբման և ինքնուրույն պետականության մեծ շեմքի առաջին անկյունաքարերը, այդ մեծ նախորդների շարքում մեր դեմ հառնում են հայոց եկեղեցու սրբացած վեհապետների ու մեծ հայրենասերների՝ Սիմեոն Երևանցու, Ղուկաս Կարնեցու և Ներսես Աշտարակեցու պայծառ կերպարները:

Հավերժ փա՛ռք նրանց նվիրական անվանը, բյուր օրհնություն նրանց արդար հիշատակին:

Այնուհետև Տ. Պիմեն ռուսաց Սրբազան Պատրիարքը հանդես է գալիս 150-ամյակին նվիրված ողջույնի գեղեցիկ ուղերձով:

## Տ. ՊԻՄԵՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
(3 հոկտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն,

Բարձրապատիվ ներկաներ,

Թույլ տվեք ինձ, հանձին ռուս պրավոսլավ եկեղեցու, սրտագին ողջունել մեր թանկագին հայ եղբայրներին ու քույրերին՝ Հայաստանի պատմության մեջ նշանակալից այս տարեթվի՝ Արևելյան Հայաստանը օտարերկրյա լծից ազատվելու, Հայկական մարզի կազմավորման և այն Ռուսաստանի կազմի մեջ մտնելու առթիվ:

Մենք բոլորս գիտենք, թե ինչ տատասկոտ է եղել հայ ազգի զարգացման պատմական ուղին: Սակայն գիտենք նաև, թե որքան մեծ է հոգեպես և իր գործերով փառապանծ այդ ժողովուրդը: Մեր թվագրությունից դեռ 9 դար առաջ Հայաստանի հողի վրա առաջացավ մարդկային քաղաքակրթության հնագույն կենտրոններից մեկը՝ Ուրարտուի պետությունը: Եվ այդ

ժամանակներից ի վեր, երկար դարերի ընթացքում, այս բարեբեր երկիրը ենթակա է եղել օտար ցեղերի մշտական արշավանքներին: Ասորեստանի նվաճողական հարձակումները, Հռոմից Հայաստանի կախվածությունը, Մեծ Հայքի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, արաբական տիրապետությունը, սելջուկների ներխուժումը, մոնղոլ-թաթարական, ինչպես և եգիպտական մամելյուկների արշավանքները, Հայաստանի նոր բաժանումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև,—ահա Հայաստանի պատմության ուղենիշները: Սակայն արիական հայ ժողովուրդը երբեք չի դադարեցրել պայքարը իր ազատագրության և անկախության համար: Քաղաքական, սոցիալական և ազգային-կրոնական դաժան ճնշումը չկարողացավ ընկճել, այլ, ընդհակառակը, բազմապատկեց համաժողովրդական ուժերը:

Ազատության համար մղվող սրբազան պայքարում կարևոր դեր է խաղացել հայ առաքելական եկեղեցին, որը հանդիսացել է հայ ժողովրդի ազգային միասնության և նրա մշակույթի հարուստ ժառանգության պաշտպանը: Հայոց կաթողիկոսները ոչ միայն կոչ են արել իրենց հոտին համերաշխության ու պայքարի, այլև երբեմն իրենք են գլխավորել ապստամբներին, ինչպես այդ տեղի ունեցավ 18-րդ դարի սկզբներին, երբ Ղարաբաղում տեղի ունեցած ապստամբության ժամանակ ժողովրդական աշխարհազորայինների խմբերին ղեկավարել է Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանը:

Անհավասար պայքար մղելով օտար ցեղերի դեմ, հայ ժողովուրդը հույսով էր իր հայացքը ուղղում դեպի Ռուսաստան՝ սպասելով եղբայրական ռուս ժողովրդից օգնություն և օժանդակություն: Հայերի ձգտումը դեպի Ռուսաստան պայմանավորված էր ոչ միայն աշխարհագրական մոտիկությամբ, այլև հայ ու ռուս ժողովուրդների միջև եղած այն տնտեսական ու մշակութային կապերով, որոնք սկիզբ են առել դեռևս Կիևյան Ռուսիայի շրջանում, երբ Հայաստանի բնակիչներից շատերը, վախենալով սելջուկներից, գաղթել են Ղրիմ և Ռուսաստանի այլ վայրեր:

Իզուր չէր հայ ժողովրդի հավատը ռուս եղբայրների օգնության նկատմամբ: Անցյալ դարի սկզբներին ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ Արևելյան Հայաստանն իր հինավուրց մայրաքաղաք Երևանով և հոգևոր կենտրոն Էջմիածնով ազատագրվեց պարսկական տիրապետությունից և մտավ Ռուսաստանի կազմի մեջ: Հայաստանը Ռուսաստանին միացվելուց անմիջապես հետո 130 հազար հայեր Թուրքիայից և Պարսկաստանից տեղափոխվեցին Արևելյան Հայաստան: Եվ թեպետ հայ ժողովրդի համար դա դեռևս վերջնական ու լրիվ ազատագրում չէր, այնուամենայնիվ, շնորհիվ այդ իրադարձության, 90 տարի հետո Ռուսաստանում ծագած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ ծնվեց Հայկական Սովետական Սոցիալիստական ինքնուրույն Հանրապետությունը: Եվ հիմա գտնվելով ազատ, ծաղկուն և արևավառ Հայաստանում, մենք ականատես ենք լինում, թե ինչպես փառապանծ հայ ժողովրդի բազմաթիվ լավագույն որդիների ու դուստրերի դարերով թափած արյունն ու կրած տառապանքները հանուն ազատագրության ապարդյուն չեն անցել: Հայ ժողովուրդը մեկ անգամ ընդմիշտ ազատվել է քաղաքական, ազգային, սոցիալական և կրոնական ճնշումից:

Ձերդ Սրբություն,

Թանկագին եղբայրներ ու բարեկամներ.

Հարյուր հիսուն տարի առաջ հայ ժողովուրդը և Հայաստանյայց առա-

քելական եկեղեցին ոտք դրեցին իրենց պատմության նոր դարաշրջանը, որն ավարտվեց ազատ Հայաստանի ստեղծումով: Մեզ՝ ռուս պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչներիս համար ուրախալի է ականատես լինել հայ ժողովրդի ակնառու նվաճումներին իր կյանքի բոլոր բնագավառներում: Առավել հաճելի է մեզ նշել, որ եղբայրական Հայաստանում, ազատության և ինքնուրույնության պայմաններում, իր փրկարար գործն է կատարում երբեմնի հալածված հայ առաքելական եկեղեցին՝ բազմապատկելով իր հեղինակությունը աշխարհում ցրված իր ժողովրդին մատուցած սրբազան ծառայությամբ, ինչպես նաև շնորհիվ իր գործարար ու բեղմնավոր էկումենիկ խաղաղասիրական համագործակցության:

Վերջում թույլ տվեք ինձ այս նշանակալից օրվա առթիվ մաղթել Հայաստանյայց առաքելական եկեղեցուն և նրա ազնվագույն Պետին՝ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-կաթողիկոս Վազգեն Ա-ին, հետագա օրհնաբեր գահակալություն: Թող Տերը խաղաղության և բարօրության մեջ պահի հայ ժողովրդին և նրա գեղեցիկ երկիրը:

Թող անխախտ լինի եղբայրությունն ու սերը հայ և ռուս ժողովուրդների միջև:

Ամբողջ սրտով մենք ցանկանում ենք ազատ, սոցիալիստական Հայաստանին հետագա հաջողություններ իր ստեղծարար աշխատանքի մեջ՝ ի բարօրություն մեր մեծ հայրենիքի ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Հանդիսության ավարտին օրհնության խոսքով հանդես է գալիս Հայոց Հայրապետը:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

(3 հոկտեմբեր 1978 թ.)

Հայոց Հայրապետի խոսքը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 12):

Տասը րոպե ընդմիջումից հետո գործադրության է դրվում հանդիսության գեղարվեստական բաժնի ծրագիրը:

Մայր տաճարի երգչախմբի մեներգիչ Կոստանդին Սիմոնյանը կատարում է Եղիվարդի «Կարմիր զորավար» պոեմի Վարդանի ճառից մի հատված. երաժշտությունը՝ տ. Արսեն եպս. Բերբերյանի:

Ապա Գլինկայի անվան համամիութենական մրցույթի դափնեկիր, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի մեներգչուհի Էլլադա Զախոյանը կատարում է Կոմիտաս վարդապետի «Կռունկ»-ը, Տիգրան Մանսուրյանի «Դավիթ մարգարե»-ն և Ալիաբևի «Սոխակ»-ը:

Այնուհետև Մայր տաճարի երգչախումբը, ղեկավարությամբ երգչախմբի դիրիժոր, հանրապետության վաստակավոր արտիստ Խորեն Մելիքանեջյանի, կատարում է Ալ. Հարությունյանի «Հայրենիք» կանտատի առաջին մասը և «Հայրենիքիս հետ» խմբերգը (խոսք՝ Հովհ. Թումանյանի), Չայկովսկու «Գոսպոդի, պոմիլույ»-ը, Օհան Դուրյանի «Քրիստոս յարեաւ»-ը:

Մեներգները կատարում են հանրապետության ժողովրդական արտիստուհի, Մայր տաճարի երգչախմբի մեներգչուհի Լուսինե Զաքարյանը և մեներգիչ Կոստանդին Սիմոնյանը:

*
* *

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

**Հոկտեմբերի 4-ին, չորեքշաբթի օրը,** ժամը 11-ին, Մայր Աթոռի հյուրերն ու պատգամավորները, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, այցելում են Սարդարապատի հուշարձանախումբ:

Ժամը 14-ին Երևանի «Արմենիա» հյուրանոցում, հանուն Հայաստանի կառավարության, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը, ի պատիվ Հայոց Հայրապետի, ընդունելություն է կազմակերպում Նրա ծննդյան 70-ամյակի և «Ժողովուրդների բարեկամության» պետական բարձրը շքանշանով պարգևատրվելու առիթով:

Ընդունելությանը ներկա են լինում Տ. Պիմեն, տ. Շնորհք սրբազան պատրիարքները, վրաց եկեղեցու պատգամավորությունը, հայ եկեղեցու թեմական առաջնորդներն ու հոգևոր հովիվները, պատգամավորներն ու արտասահմանյան հյուրերը, Գերագույն հոգևոր խորհրդի և եկեղեցական խորհրդի անդամները, մտավորականներ, արվեստագետներ, մամուլի ներկայացուցիչներ՝ ավելի քան 60 հրավիրյալներ:

Ընդունելությունն անցնում է ջերմ ու խանդավառ մթնոլորտում, որի ընթացքում Հայոց Հայրապետին ողջունում և շնորհավորում են ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահ պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, ակադեմիկոս, նկարիչ Գրիգոր Խանջյանը, տ. Սիոն արքեպիսկոպոսը, Մոսկվայի ռուսաց պատրիարքարանի պաշտոնաթերթի խմբագիր տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսը, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը և, հանուն պատգամավորների՝ Ժնևի ծանոթ ու հարգված ազգայիններից տիար Մկրտիչ Ճելեֆյանը:

Ընդունելության ավարտին շնորհակալության և օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

**Հոկտեմբերի 5-ին, հինգշաբթի օրը,** առավոտյան ժամը 11-ին, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Տ. Սարգսյանը ընդունում է Հայոց Հայրապետին, Տ. Պիմեն և տ. Շնորհք սրբազան պատրիարքներին, վրաց եկեղեցու պատգամավորներին, հայ եկեղեցու բարձրաստիճան թեմական առաջնորդներին, պատգամավորներին և հյուրերին:

Հայոց Հայրապետը Հայաստանի կառավարության մեծահարգ վարչապետին է ներկայացնում Մայր Աթոռի պատվարժան հյուրերին, որոնք մասնակցել էին ս. Էջմիածնում հոբելյանական հանդիսություններին:

Հայկական ՍՍՀ կառավարության անունից Ֆ. Տ. Սարգսյանը շնորհավորում է Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակը և «Ժողովուրդների

բարեկամության» շքանշանով պարգևատրվելու առիթով, Նորին Սրբությանը մաղթում քաջառողջություն, նորանոր հաջողություններ հայրենասիրական և խաղաղասիրական Նրա աշխատանքների մեջ:

Այնուհետև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի մեծահարգ նախագահը ներկաներին ծանոթացնում է մշակութային, տնտեսական, գիտական զարգացման բնագավառներում Հայկական ՍՍՀ-ի ձեռք բերած նվաճումներին:

Ընդունելության ժամանակ ելույթ է ունենում Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը, որը կրկին շնորհավորում է Հայոց Հայրապետին՝ Նրա ծննդյան 70-ամյակի և պետական բարձր շքանշանով պարգևատրվելու առթիվ, և շեշտում է նաև Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման առաջադիմական և պատմական նշանակությունը հայ ժողովրդի և հայ եկեղեցու կյանքում՝ որպես հայ և ռուս ժողովուրդների և եկեղեցիների եղբայրության և բարեկամության տոնի:

Ընդունելության ժամանակ ելույթներ են ունենում նաև տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Ծվեյցարիայից՝ Մկրտիչ Շելեֆյանը, և Կալիֆոռնիայից՝ Հովհաննես Ղազանչյանը, որոնք ազգային հպարտությամբ նշում են մեր հայրենիքի մեծ առաջընթացը կյանքի բոլոր բնագավառներում, և բարեմաղթում նոր հաջողություններ հայ ժողովրդին և հետագա բարգավաճում ու բարօրություն՝ հայրենիքին:

Վերջում շնորհակալության խոսք է ասում Հայոց Հայրապետը և բարեմաղթություններ կատարում հայրենի բարեխնամ կառավարությանը և նրա իմաստուն ղեկավարներին՝ նրանց հայրենանվեր գործունեության ճանապարհի վրա՝ հուրախություն հայրենի երկրի և սփյուռքի բովանդակ հայության:

Սույն պաշտոնական ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի պատասխանատու աշխատող Էդվարդ Ս. Գալստյանը:

Հոկտեմբերի 5-ին, հինգշաբթի օրը, երեկոյան, ռուսաց ամենապատիվ Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը և վրաց եկեղեցու պատգամավորները հրաժեշտ են տալիս Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին ու մեկնում լավագույն տպավորություններով:

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

**Հոկտեմբերի 7-ին, շաբաթ օրը,** առավոտյան ժամը 8-ին, Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ, Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Շահե արքեպ. Աճեմյանը, որը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հանուն Մայր Աթոռի, հոկտեմբերի 4-ին ներկա էր եղել Վատիկանում Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Ա Պապի թաղման արարողությանը:

Նույն օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում Վեհարանում մի խորհրդակցություն, որին մասնակցում են.

1. Տ. Շնորհք սրբազան պատրիարք հայոց Թուրքիայի.

ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ (1978 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4)

2. Տ. Սիոն արքեպ. Մանուկյան, Մայր Աթոռի միաբան.

3. Տ. Սերովբե արքեպ. Մանուկյան, հայրապետական պատվիրակ Արևմտյան Եվրոպայի հայոց և Ֆրանսիայի առաջնորդ.

4. Տ. Պսակ արքեպ. Թումայան, Մայր Աթոռի միաբան.

5. Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան, առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի.

6. Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյան, առաջնորդ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի.

7. Տ. Վաչե արքեպ. Հովսեփյան, առաջնորդ ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի.

8. Տ. Շահե արքեպ. Աճեմյան, Երուսաղեմի սրբոց Հակոբյանց միաբանության անդամ.

9. Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյան, առաջնորդ հայոց Ադրբեջանի.

10. Տ. Զավեն եպս. Չինչինյան, առաջնորդ հայոց Եգիպտոսի.

11. Տ. Տիրայր եպս. Մարտիկյան, առաջնորդ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի.

12. Տ. Գարեգին եպս. Գազանճյան, առաջնորդ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի.

13. Տ. Նարեկ եպս. Շաքարյան, առաջնորդ Շիրակի թեմի.

14. Տ. Գևորգ եպս. Սերայդարյան, առաջնորդ Վրաստանի հայոց թեմի.

15. Տ. Ներսես եպս. Պոզապալյան, հայրապետական պատվիրակ և հոգևոր առաջնորդ հայոց Անգլիայի թեմի.

16. Տ. Արսեն եպս. Բերբերյան, դիվանապետ Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Խորհրդակցությանը մասնակցում են նաև՝

17. Տ. Ոսկան ծ. վրդ. Գալփաքյանը, առաջնորդ Դամասկոսի հայոց թեմի.

18. Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյան, հոգևոր հովիվ հայոց Ավստրիայի.

19. Տ. Վազգեն ծ. վրդ. Թադոյան, հոգևոր հովիվ հայոց Շվեյցարիայի:

Խորհրդակցությունը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Այնուհետև Նորին Սուրբ Օծությունը «Հոգուց» է արտասանում այս տարի վախճանված տ. Ատողիկ, տ. Բաբգեն և տ. Տաճատ արքեպիսկոպոսների և տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանի հոգիների խաղաղության և հանգստության համար:

Բոլոր ժողովականները հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգում են հիշատակը հայ եկեղեցու հանգուցյալ հոգևորականների:

Խորհրդակցության սկզբում տ. Շնորհք արբազան պատրիարքը ընթերցում է՝ հաջորդ Եպիսկոպոսաց ժողովի քննարկմանը ներկայացվելիք իր գրավոր ուսումնասիրությունը Զատկի հարցի շուրջ:

Խորհրդակցությունում տեղի է ունենում մտքերի և կարծիքների լայն փոխանակություն մի շարք ազգային-եկեղեցական հարցերի մասին:

Ժողովականները խնդրում են Վեհափառ Հայրապետին՝ Իր բարձր հեղինակությամբ կարգադրել պարտն ու պատշաճը, առաջիկա տարի ս. Էջմիածնում Եպիսկոպոսաց ժողովի գումարման համար: